Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ <<Տավուշի մարզի Պառավաքարի Էդիկ Մելիքյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (20 դասաժամ), քիմիայի (10 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (21 դասաժամ) թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում (Ձև 1),

2. մեկ լուսանկար 3x4 չափի,

3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

4. անձը հաստատող փաստաթուղթ,

5. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից

6. աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

7. ինքնակենսագրություն (Ձև 5),

8.այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

9. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

10.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

11.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Տավուշի մարզի Պառավաքարի Էդիկ Մելիքյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Տավուշի մարզ, գՊառավաքար, 4-րդ փող, շենք 9: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077)15-90-09 հեռախոսահամարով: